

Արձանագրություն 7

2014թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի հերթական նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 27-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ ՀՄՖ դեկան Հ. Ղաջոյան /

2.ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվություն և 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգի ներկայացում:

/ զեկ.՝ ՏՖ դեկան Ս. Ամիրխանյան /

3. Ընթացիկ հարցեր:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2013-2014 ուստարվա գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ ֆակուլտետի դեկան Հ. Ղաջոյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց ֆակուլտետում նշված ժամանակաշրջանում կատարված աշխատանքները, անդրադարձավ ուսանողական համակազմի համալրման, առաջադիմության, կարգապահության, կազմակերպված միջոցառումների, կիսամյակային և ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցերին՝ բերելով համապատասխան տվյալներ ըստ բաժինների, կատարելով վերլուծություններ և եզրահանգումներ: Հաջողությամբ իրագործվել են զարգացման հայեցակարգի դրույթները: Նա նաև նշեց, որ եղել են թերություններ և բացթողումներ, որոնք ընթացքում շտկվել են: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգը, որով նախատեսվել են աշխատանքներ՝ ուսումնական, գիտահետազոտական, միջամբիոնային, միջֆակուլտետային, համահամալսարանական ուղղություններով:

Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ս. Ամիրխանյանի հաշվետվությունը ևս ներկայացնում էր 2013-2014 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները: Մանրամասնորեն

ներկայացնելով և վերլուծելով դրանք՝ զեկուցողն ընդգծեց ուսուցման գործընթացի, գիտահետազոտական, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը: Կարևորվեց տարբեր կարգի միջոցառումների դերը ուսանողների համակողմանի զարգացման մեջ: Ներկայացնելով 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգը՝ Ս. Ամիրխանյանը նշեց, որ զարգացման հայեցակարգում ներառված են այնպիսի միջոցառումներ, որոնք միտում ունեն բարձրացնելու հատկապես մասնագիտական կրթության որակը՝ հաշվի առնելով աշխատաշուկայի հարաճուն պահանջները:

Քննարկվեցին նաև մի շարք հարցեր՝ կապված համալսարանի ընթացիկ գործունեության հետ: ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուսուզյանը կարևորեց ԳՊՀ <<Գիտական հոդվածների ժողովածուն>> ԲՈՀ-ի՝ատենախոսությունների համար անհրաժեշտ գիտական պարբերականների ցանկում ընդգրկելու հարցը: Նա նշեց, որ նախապատրաստվել են համապատասխան փաստաթղթերը ԲՈՀ ներկայացնելու համար:

Ելույթ ունեցան ֆակուլտետների ղեկանները, ամբիոնների վարիչները և դասախոսներ:

Հիմք ընդունելով հաշվետվությունները և ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1. ՀՄՖ ղեկան Հ. Ղաջոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Հավանություն տալ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:
3. ՏՖ ղեկան Ս. Ամիրխանյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
4. Հավանություն տալ տնտեսագիտական ֆակուլտետի 2014-2015 ուստարվա զարգացման հայեցակարգին:
5. Դիմել ԲՈՀ՝ԳՊՀ <<Գիտական հոդվածների ժողովածուն>> ատենախոսությունների համար անհրաժեշտ գիտական պարբերականների ցանկում ընդգրկելու համար:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան